


### Ա Ն Տ Ի Պ Մ Ա Ս Ե Ր

## ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԵՍԱՅԵԱՅ ՈՍԿԵԴԱՐԵԱՆ ԹԱՐԳՍԱՆՈՒԹԵՆԷՆ



Սուրբ Գրոց մեկնաբանութեան և եկեղեցական գրականութեան համար, բանասիրական տեսակետով մեծապէս հետաքրքրական է Ոսկերբերանի մեկնութիւնը Եսայիի մարգարէութեան վրայ: Անոր թէ՛ յունարէն բնագիրը և թէ՛ թարգմանութիւնները թերի են ընդհանրապէս. այնպէս որ խնդրոյ առարկայ եղած է սա հարցը թէ իսկականին մէջ ի՞նչ և ո՞րչափ եղած է արդեօք բուն մատենագիրէն գրուածը: Յարզ զոյ եղած կամ գտնուած յունարէնը, ըստ հրատարակութեան Մինքրի, կը պարունակէ միայն նախերգանք մը ևս Ա. — Բ. 10 մասին վրայ մեկնութիւն մը: Վենետիոյ Մխիթարեանց ձեռագիրը, որ 1880 ի տպագրութեամբ հրատարակուած է Հ. Աթ. Տիրոյանի խնամքով, և չուէի ոչ յիշատակարան և ոչ թուական, և «միջին անուանեալ երկուստեքով» գրուած և ամէն տեսակետով ժժ. դարու ընդօրինակութիւն կը նկատուի հրատարակիչէն, ինչպէս նաև Վիննա նական Մխիթարեանցը, որ, ըստ ամենայնի նոյն է՝ Վենետիկեանին հետ՝ ըստ տեղեկագրութեան Տաշեան Մայր-Յուցակի (էջ 571), երկուքն ալ չուէին բնագրին նախերգանքը ևս Ա. — Բ. 1 ը. այսինքն կը սկսին Բ. 2 էն, և բնագրին ճիշդ սպասած կէտին՝ կը զննն սա ծանօթութիւնը. «Մինչև ցայս վայր դտառ իւրով ձեռով գրեալ երանելոյն Յովհաննու, յունարէն»: Այնու ամենայնիս երկուքն ալ կը շարունակուին, երբեմն անընթեռնի մնացած բառերու ընդհատումով կամ պակասումով միայն, մինչև ԻԱ. 1 ը, որմէ վերջ՝ մինչև 1. գլուխ և 6 համար, այսինքն չուէր տարբերակներու ընդհատով մը, կը շարունակուին դարձեալ մինչև կԳ. 10 - 12. որ է ըսել թէ վերջնալու համար կը պակսին իրենց՝ միայն կԵ և կԶ գլուխները — Որովհետև Ոսկերբերանի այս գործը ևս — Սուրբ Գրոց ուրիշ մասերու վրայ իբր քարոզութիւն կամ մեկնողական ուսուցում կատարուած իր միւս մատենագրութեանց նման — ամբողջական միայն կրնար ըլլար, յունարէնին՝ Բ. գլուխ և համար 10 ին վրայ վերջնալու բանաւոր էր անշուշտ բացատրել բնագրական մասերու կորուստովը, ինչ որ, այնքան յաճախադէպ է եղած հին ժամանակներու մէջ: Ի յառաջագունէ միայն կատարուած այս ենթադրութիւնը սակայն շատ գեղեցիկ կերպով հաստատութիւն կը գտնէր հնութեամբը հայերէն ոսկեղարեան թարգմանութեան, որ, թէևս ինք ալ ընդհատներով կամ թերոյթներով (lacune) արկածաբարուած, բայց վերջապէս ամբողջութեան տեսակետով անհամեմատ առաւելութիւն կը ներկայացնէ վերայոյցած յունականին վրայ: Գալով անբնագրի մնացած հայերէն թարգմանութեան հարադատութեան, այսինքն այն խնդրոյն թէ անոնք իսկապէս Ոսկերբերանի՞ գործին թարգմանութիւնն են թէ ոչ, այս մասին անշուշտ վճռականորէն հաստատական պատասխանի մը կը տանի միտքը բացարձակապէս անառարկելի նոյնութիւնը՝ որ կայ բնագրաւոր և անբնագրի թարգմանութեանց բոլոր հատուածներուն մէջ, թէ՛ արտայայտութեան կերպի և թէ՛ իմաստի ոգու տեսակետով: Ոսկերբերանն է որ բացորոշապէս կը զգացուի մէն մի էջին ևս մէն մի պարբերութեան մէջ, թէ՛ իր քրիստոնէական պերճախօսութեան հօքը և սրտառու շնչովը, թէ՛ աւետարանական բարոյականի պայծառ և կորովի իմացումներովը, և թէ Աստուածաշունչի հասկցողութեան մասին իր այն տեսութեամբը, որ Անտիօքեան և Ազեքսանդրական զպրօցներու ընթանումներուն միջասանման իր կեցուածքը կը յատկանշեն:

Աւելորդ պիտի ըլլար որ և է խօսք ընել հոս հայերէն թարգմանութեան լեզուական արժէքին և գործին ամբողջականութեան մասին: Ոսկեղարեան հայերէնի աղնու աղան դասին բոլոր ստորագելիները ունի ան, թէ՛ բնագրով և թէ՛ առանց բնագրի այժմ զոյ եղած հատուածներու մէջ՝ ոսկեղարեան այս գրական յատկանիշները այնքան համանման են, որ առաջին իսկ նայուածքով մարզ պիտի համոզուէր թէ անոնք մէկ ամբողջականութեան մը մասերն են միայն, և նոյն գրիչէն հայերէնի յեղուած: Այս մասին աւելի ազգացոյց մըն է տակաւին այն իրողութիւնը թէ, զեռ ժԳ. դարուն, Գէորդ Սիկեացի վարդապետ Եսայեայ վրայ իր մեկնութիւնը գրած միջոցին աչքի առչեւ ունեցած է հին ոսկեղարեան թարգմանութիւնը, որմէ ծագկապէս եղած իր գործին մէջ յայտնապէս կ'երևին նշմարներ հին թարգմանութեան բոլոր մասերէն, այսինքն, նաև այն գլուխներէն, որոնք զեռ կորսուած կը մնան, ևս ասոնցմով ինչպէս նաև ձառնտիրներու մէջ ցրիւ գտնուած բոլոր հատուածները կամ փոփոխակները ի մի բերելով՝ բոլորովին անկարելի պիտի չըլար թերևս հինը եթէ ոչ բոլորովին վերակազմելու այլ գէթ անոր թերոյթները մեծ մասամբ կարկատելու փորձ մը:

Կը խորհինք թէ Ոսկերբերանի Եսայեայ մեկնութեան ոսկեղարեան հայերէն թարգմանութեան ի սկզբան անդ ամբողջական եղած լինելուն մասին նոր փաստ մը ևս հայթայթած պիտի լինինք, բանասիրաց ուշադրութեան յանձնելով Ս. Աթոռոյս գրչագրաց Մատենադարանի մէկ ձեռագիրը, որ կը պարունակէ նոյն գործին թէև ԻԶ. գլուխները, այսինքն ճիշդ կէտը միայն, բայց աւելի ամբողջական վիճակի մէջ: Որովհետև այս մերկը, ունի նախերգանքը (= «Յառաջասացութիւն»)

և Ա. 1 — Բ. ին մեկնարանութիւնը ամբողջ, որոնք կան յունարէնին մէջ, բայց կը պահպին տպագրուածին մէջ: Յետոյ ունի նոյնպէս տպագրուածին մէջ պահած իԱ. 2 — 1. 6 բաժինին մեծագոյն մասը, զի շարունակուելով իԱ. 2 էն՝ կը հասնի մինչև ԻԶ. գլուխի վերջընթեր 20 համարի մեկնութիւնը: Իսկ անկէ անդին ինկած կը թուին հետագայ թուղթերը: Վերջին պարբերութիւնն է այս. «Վասն այնորիկ ասէ. «Փախի՛ր և թաքի՛ր, զի կամի աներկիւզս առնել զնոսա. Եւ արդ քանզի Աստուծոյ բանն ոչ այնպէս ինչ միայն վճարէր որպէս մարդկանն, վասն այնորիկ ասէ. քանզի առ Բաղամաւ այսպիսի ինչ գործ գործեցաւ» — ձաշակ մը տուած ըլլալու համար այս անտիպ գլուխներուն մասին, ստորև կը զննեք քանի մը հատուածներ առաջին գլուխէն, մնացեալին ամբողջական հրատարակութիւնը թողլով պատեհագոյն ժամանակի:

Չմտնանք աւելցնել թէ այս ձեռագիրս ևս չունի ոչ յիշատակաբան, և ոչ թուական. զբուռած է թանձր բամպակեայ թուղթի վրայ, զէպի բոլորդիր հակող անցման գրով և ժԲ — ժԳ դարու գրչութեան տպաւորութիւն կը թողու: Տ. Յովնանէս Խաչիկեան Քահանայ, Կալկաթայի երբեմնի հանրաձայնութեալ աւագերէցը, որ 1839 ին տէր էր եղած գրչագրիս, նոր Զուղայի մէջ, զգացած էր արդէն անոր կարեւորութիւնը, և ԻԲ. թուղթին երկրորդ էջին վրայ Բ. գլուխի 2 համարին զէժ լուսանցադրած՝ «Վննետիկի տպագրութիւնն աստէն սկսանի»։ Բայց թէ՛ բուն ձեռագիրը, որ կը թուի թէ նուիրակ Խաչիկ վարդապետ Գաղատացիի ձեռքով երուսաղէմ էր բերուած շնորհատանէն, և թէ այս վերջինին միջոցաւ անոր վրայէն կատարուած ընդօրինակութիւնը, զբեթէ աննկատ մնացած էին Մատենադարանին մէջ, մինչև հանգիպելը հոգելոյս Տ. Եղիշէ Սրբազան Պատրիարքի խաղաղութեալ սկսանքին, իր մահէն շուրջ երկու տարիներ առաջ: Սրբազանը, որ անմիջապէս համեմատած էր զայն տպագրին հետ, ինքն էր որ առաջին անգամ գիտած էր իԱ. 2 — ԻԶ. 20 գլուխներուն առաւելութիւնը մեր ձեռագրին մէջ, և կը փափաքէր համեմատական հրատարակութեամբ ի լոյս ածել զայն: Կերպով մը իր կտակն է որ կատարած պիտի ըլլանք, եթէ կարելի ըլլայ մեզի յարմար պատեհութեամբ մը կատարել իր այդ մտադրութիւնը:

Տեսիլ ասէ զոր ետես Նսայի.

. . . Իսկ նորոյ կտակարանաց պայտանեայքս ևս առաւելագոյն քան զնոսացուցին քաջութիւնս, քանզի մեծամեծ ևս շնորհի եղևն արժանի վայելելոյ զբազմապատիկ ճգնութիւնս կրեալ առաքինանարին, վասն այնորիկ և Պետրոս յորժամ լուաւ ի Քրիստոսէ, եթէ զժուարին է մեծատան մտանել յարքայութիւն երկնից, վշտանայր և հարցանէր երկիւղիւ. թէ օ՞ կարիցէ ապրել, թէպէտ ևս վասն իւրոյ իրացն համարձակութիւն ունէր առ Տէրն. քանզի ո՛չ եթէ զանձանց ինչ խնդրէին, այլ փոխանակ ամենայն աշխարհաց հոգաին: Իսկ Պաւղոս ամենեկին յամենայն ի թուղթսն այսպիսի միտս ցուցանէ, զի ևս զՔրիստոս բազմաց փրկութիւն տեսանիցէ. ելանել ասէ ի մարմնոյս և ընդ Քրիստոսի լինել լաւ համարիմ, բայց կալ մնալ ի մարմնի ե՛ւս կարեւոր վասն ձեր: Եւ արդ՝ այսպիսի իմն աւրինակ ցուցանէ մարգարէս. զի և զպատուհասն ես՝ որ գալոց էին յԱստուծոյ, ասէր համարձակութեամբ, և մեղաբեցողոցն սաստէ: Եւ դարձեալ աղաչէ զԱստուած վասն նոցա, առ նոսա զայրազնի, ևս առ Աստուած բարեխօս լինի, ևս զայս ի կատարածի մարգարութեան է իմանալ: Բայց այժմ սկիզբն արարեալ ի զլիտոյս մեկնեսցուք զամենայն:

Տեսիլ՝ զմարգարէութիւն ասէ, կամ զբազում իրս՝ որ անցանելոց էին ընդ նոսա, զոր իրրեւ աշաւք տեսեալ պատմէր: Եւ տեսիլ անուանէ, որպէս և Միքեան և տես զժողովուրդն ցրուեալ. և Եղեկիէլ՝ զգերութիւնն, և զանարէնութիւնն՝ զոր գործէին, զի արեգականն երկիր պազանէին և նստեալ զթամուզ լաին, կամ զի զլուրն՝ զոր յԱստուծոյ լսէին ոչինչ նուազագոյն քան զտեսիլ երեսաց համարէին. այլ վաղվազակի հաւատարին այսպիսի ինչ իմիք որ յաշխարհի չգտանի: Եւ զի այլազգ իմն լսէին քան զայլ մարդիկ. ինքն իսկ ասէ, թե յաւելին ունկն ի լսել, և զի արժանի հաւատալոյ արացնէ զբանն՝ կոչէ տեսիլ, զի զարթուցէ զլսողսն, և առաքեսցէ առ այն որ եցոյց զտեսիլն: Քանզի սովորութիւն իսկ է ամենայն պատգամաւորաց զառ ի յԱստուծոյ ճառեալսն պատուական քան զայլ բանսն պատմել. զի յայտ արացեն, եթե ո՛չ յանձանց ինչ խօսին. այլ Աստուծոյ հրամանք են, զոր պատմենն: Եւ թէ յերկնից իջեալ են զիրք, որպէս և Դաւիթ իսկ ասէր, թէ լեզու իմ որպէս զեղէզն գրչի ճարտարի, զի մի եղեգանն ինչ համարեսցիս զգիրն, այլ աջոյն որ ունիցի զեղէզնն ի ձեռինն, այսինքն մի՛ լեզուոյն Դաւթի, այլ շնորհացն՝

որ շարժելին զլեզուն: Նաև միւս Մ'ւս մարգարէ զսոյն յայտ արարեալ ասէր. թէ այր մի հովիւ էի ես, և թուի քաղէի. և այսու յայտ առնէ զի մի մարդկեզէն իմաստութիւն կարծիցէ զմարգարէութիւն, եւ ո՛չ զայս միայն բաւական համարէր, այլ զմիւսն եւս յաւելեալ ասէր. բայց ես լցայ ուժոյ ի Հոգի Տեառն, և իրաւամբք, և զաւրութեամբք, քանզի ո՛չ միայն իմաստունս, այլև զաւրաւորս կատարեցին զնոսա շնորհքըն, ոչ մարմնական ինչ պնդակազմութեամբ, այլ մտացն առաքինութեամբ: Քանզի առ լիւրբ և անամաւթ ժողովուրդն առաքէին, որ արեամբ մարգարէիցն էին ծարաւիք, եւ ի սպանումն սրբոցն եւեթ խոկախն: Յիրաւի պիտոյ էր նոցա բազում զաւրութիւն, զի մի՛ կասիցեն ինչ ի բազում զաւրութենէն. վասն այնորիկ ասէ իսկ ցերեմիա, թէ եզի զքեզ իրբև զսիւն երկաթի, եւ իրբեւ զպարխպ պղնձի: Եւ ցնդեկիէ՛լ՝ թէ ի մէջ կարճաց ես բնակեալ, մի՛ երկնչիցես յերեսաց նոցա, և մի՛ զանգիտիցես: Եւ զՄովսէս յորժամ առաքէրն, թուի ինձ, թէ ոչ ի Փարաւոնէ երկուցեալ զանդաղէր, այլ ի լպրշական հրէիցն անտի. զի յորժամ խաւսէրն ընդ Աստուծոյ, թողեալ զվայրենամիտսն, մեծաւ փութով կամէր ուսանել թէ զի՛նչ ինչ ընդ անհաւատ ժողովրդեանն խաւսիցի. նաև նշանքըն՝ որ տուեալ էին յԱստուծոյ, իրբեւ վասն նոցա իմն առնոյր. և արդարեւ յիրաւի, զի եթէ մինն որում երախտիսն իսկ արար, այնպէս երկեցոյց զնա, զիս՞րդ ո՛չ կասկածէր, բազում չարչարանս յայնպիսի լիւր ժողովրդեանէն կրել. վասն այնորիկ ո՛չ միայն իմաստութեան, այլ և զաւրութեան հոգի ընդունէին. քանզի և ասէ իսկ մարգարէն, թէ ես լցա ուժո ի Հոգի Տեառն, և իրաւամբք, և զաւրութեամբ: Եւ միւս ևս թէ բան Տեառն՝ որ եղև առ Երեմիա մարգարէ Քեզկեայ, եւ միւս ևս, եթէ առած Նինուէի, և զիրք տեպեան, Նաւուա որդւոյ Եզկեսեայ. և սոյն մարգարէ միւսով բանիւ զսոյն ըստ առաջնոյն յայտ առնէ, զՀոգւոյն ընդունելութիւն առածած կոչէ. քանզի զոր ինչ առնուին ի Հոգւոյն, զնոյն խաւսէին, զազգումն շնորհացն այնպէս առածած կոչէին. վասն այնորիկ եւ Պաւղոս յամենայն թուղթսն զնէ զանուն թղթոցն, զոր և մարգարէքն

առնէին. Տեսիլ, և բան, և առածած, և պատգամ անուանէին, նոյնպէս և Պաւղոս զանուն թղթոցն առնէ՝ նշանակ թղթոցն. զոր աւրինակ՝ որք ասէին Տեսիլ և Պատգամ, ո՛չ զիւրեանց ինչ յայտ առնէին, այլ զայնորիկ՝ որ զտեսիլն ցուցանէր, նոյնպէս և առաքեալ՝ թէպէտև զիւր անունն զնէ, այլ այնու զի զանուն թղթոցն նշանակէ, յայտ առնէ, թէ ո՛չ զիւր ինչ ուսուցանէ, այլ զհրաման այնորիկ՝ որ առաքեացն զնա, զի առաքելոյ այն պատիւ է, յորժամ ո՛չ զիւր ինչ ուսուցանիցէ, այլ զՏէրունի. վասն որոյ և Քրիստոս ասէր, թէ մի՛ կոչէք ձեզ վարդապետ յերկրի, քանզի մի է ձեր վարդապետ յերկինս, զի յայտ արասցէ, թէ ամենայն աստուածագէտ կրանից՝ որ առ մեզ պաշտիցին, արմատք ի վերուստ են, ի Տեառնէ երկնից. թէպէտև մարդիկ իցեն լեալ սպասաւորք ճառելոցն, զոր և Եսայի ետես:

Բայց եթէ ո՛րպէս տեսանէին մարգարէքն զոր ինչ տեսանէին, այն չէ մեր ասել. քանզի չէ՛ ինչ հնար բանիւ մեկնել զպայման տեսլեանն, այլ այն միայն զիտէ, որոյ զփորձն իցէ առեալ. զի եթէ զընութեան ինչ զգործ եւ զբարիս, ոչ ոք կարէ բազում անգամ բանիւ յանդիման կացուցանել, ո՛րչափ եւս առաւել զպայման հոգւոյն ազգմանց, զի եթէ ընդ աղաւտ ինչ աւրինակաւք պարտ ումք իցէ ժպրհել, սակայն ո՛չ եթէ հաւաստեաւ կարիցէ յայտ յանդիման զիրսն կացուցանել, սոյնպէս և զմարգարէութեան ճառս է իմանալ. և զոր աւրինակ՝ յստակ ջուրցն բնութեան զճառագայթս արեգականն ընկալեալ՝ Մ'ւս առաւելագոյն պաղպաղիցէ, նոյնպէս և ոզիք մարգարէիցն սրբեալ իւրեանց առաքինութեամբ, նախ ընդունէին զպարգեւս Հոգւոյն, հասեալք ի վերայ իրացն՝ որ ինչ յապա էին գործելոց, սպա եւ այլոց գուշակէին զգիտութիւնն՝ որում էինն հասու:

Տեսիլ ասէ Եսայա որդւո Անովա.

Եւ արդ՝ ընդէ՛ր զանուն Հաւրն յիշեսցէ կամ վասն ընդ անուամբ կրկին անուանց. կամ զի ուսանիցես, թէ հաւր յոռութիւն զորդւոյ քաջութիւն չկարէ ազարտել, եւ ո՛չ այն ինչ ազնուականութեան է, յորժամ յաւազաց ոք ծնանիցի, այլ այն՝ յորժամ ինքն զինքն աւագ առնիցէ. քանզի

և սա յաննշանաւոր ինչ ի հաւրէ քան զամենեսին գտաւ լուսաւորեալ իւրով առաւել առաքինութեամբքն:

Զորչեսես ի վերայ Հրեասանի եւ ի վերայ Երուսաղեմի:

Վասն է՛ր ուրոյն իմն յիշէ զանուանս տեղեացն. քանզի եւ ուրոյն ուրոյն իսկ եկին ի վերայ պատիժք պատուհասիցն, և ընդ այլ ժամանակս, և զայս եւս Աստուծոյ լուսազոյն խորհեալ, զի մի ամենեքեան միանգամայն կորնչիցին, այլ մեղմով, եւ առ սակաւ սակաւ, զի նոքովք՝ որ զպատիժս կրեցին, մնացեալքն լինիցին իմաստնազոյնք, թէպէտեւ ո՛չ եղեն պիտանիք զեղաւքն, այն ո՛չ բժշկին ինչ, այլ ակտացելոյն է վրաս, և այսպէս հանապազ: Զայս յիւրաքանչիւր ազգս առնէ Աստուած. եւ ո՛չ զամենեսին ի միասին, որք զնոյն մեղս գործիցեն, միանգամայն տանջէ, ապա թէ ո՛չ՝ ի վաղուց իսկ հետէ բարձեալ էր զամենայն ազգս մարդկան, այլ զկիտոց զվրէժն աստ պահանջէ, զի անդ թեթեւազոյն առնիցէ դտանջանս. եւ որք ի նոցա ժամանակս կենդանի իցեն, նոցա մեծամեծ հնարս աւկտութեան ցուցանիցէ. իսկ որք ո՛չ յանձանց, եւ ո՛չ յայսպիսի տեսութեանց կամիցին շահել ինչ, զայնպիսիսն անհրաժեշտ և հնազին տանջանաց աւուրն համարեալ պահիցէ ի դատապարտութիւն:

Ի քաղաւորութեան Ոգիս, եւ Յովաքսմու եւ Ահազու, եւ Եգեկիսա՝ որ քաղաւորեցին ի Հրեասանի:

Եւ զժամանակն կարեւոր իմն զնէ, զի զուսուսմասէր լսողն առաքեսցէ ի պատմութիւն իրացն գործելոց, զի այսպէս զիւրաւ ուսանիցիմք, եւ ի միտ առնուցումք զմարգասիրութիւնքն, յորժամ խելամուտ լինիցիմք, եթէ զինչ իցեն իրքն, կամ որպիսի վէրք էին հրէիցն. յորժամ մարգարէքն զայսպիսի զեղս կազմէին:

Լուսա՛ւօ՛ւ Ե՛րկիմօ՛ւ, եւ ունկն դի՛ր երկիր, զի Տէր խաւսեցաւ:

Իագուօ՛ւ ցասմամբ լի է սկիզբն մարգարէութեանս, զի եթէ ո՛չ յոյժ, և սաստիկ էր բարկութիւն, ապա ոչ թողոյր զմարդիկ և յարարածս զարձուցանէր ըզբանն, և այսու ո՛չ միայն զբարկութիւն ցուցանէ, այլ զի եւ զնոսա՝ որ լսելոցն էին, առնիցէ յամալթ, յաճախազոյն յայտ

արարեալ, թէ քան զանդգայսն ևս անդգայագոյնք էին, որք բռնիւն էին պատուեալք. զայս և այլ ևս մարգարէքն սովոր էին առնել, վասն որոյ և որ առ յորորովամ առաքեցաւ մարգարէն, թողեալ զթագաւորն ընդ սեղանոյն խաւսէր. եւ Երեմիա մարգարէի զերկիր ի մէջ կոչեցեալ ասէր, Ե՛րկիր, երկիր. և միւսն ևս ասէր. թէ լուարո՛ւք ձորք եւ հիմունք երկրի:

Որդիս ասէ ծնա:

Ո՛չ զհասարակաց երախտիւն՝ որ առ ամենայն մարդիկ է, յիշեցուցանէ աստ, զի ամենեցուն արարիչ է, այլ զառաւելն՝ որ առ նոսա միայն, զի որդիք կոչեցան: Յամենայն վայրի ցուցանէ զիւր բարերաթիւն Աստուած: Զոր աւրինակ յորժամ զմարդն ստեղծանէր, և մինչև և լիեալ էր, պատուեաց, արասցաւք մարդ ասէ ըստ պատկերի կերպարանաց մերոց: Իսկ ի նորումս և ի մեծի՛ ո՛չ միայն զայնոսիկ որոց չէր ինչ գործս ցուցեալ, այլ և որոց բիւր չարիս գործեալ էր, պատուեաց միւսանգամ ծննդեամբ աւագանին, զոր և աստ է տեսանել, զի ըստ որդեկութեան ո՛չ միայն ուղղութիւնս ինչ չէր ցուցեալ, այլ թէպէտեւ անցեալ էին յորդեկութիւնէն, սակայն պատուեաց, բայց ո՛չ վասն զի պատուեաց յառաջ քան զվաստակս, զրկիցէ յետ վաստակոցն, այլ զի և յայնժամ ևս մեծամեծ տացէ զվարձուց հատուցումն յորժամ զյաղթութիւն վաստակոյն ցուցանիցեն: Որդիս ասէ ծնայ, ո՛չ միայն պատուելով որդւոյն անուամբ յիշեցուցանէ զերախտիւն, այլ և բարձրացուցի ևս ասէ. Զամենայն երախտիւն՝ որ յերկրին Եգիպտացուց արար և յանապատին, և ի Պաղեստինացուց աշխարհին, միով բանիւ ասաց միանգամայն. քանզի սովորութիւն է Աստուծոյ զառաւելութիւն բարերարութեանց ո՛չ սակաւ սակաւ թուել յամելով ի պատմել զգործոցն, այլ միանգամայն զամենայն միով բանիւ ճառել:

Եւ նոքա զիս անարգեցին:

Անցին ասէ զաւրինաւք իմովք, եւ զհրամանս իմ մերժեցին:

Ծանեաւ եզն զսացիչ իւր, եւ եռ ըզմաուր Տեառն իւրոյ:

Համեմատութիւնքն զամբաստանութիւնս աճեցուցանեն, և մանաւանդ յոր-

ժամ յանզուգականացն առ անզուգականս լինիցին, ըստ այնմ զոր Քրիստոս ասէր, թէ արք նընուեացիք յարիցեն ոսոխ ընդ ազգիս ընդ այսմիկ, և դատապարտեսցեն զսա. և Դշխոյն հարաւոյ յարիցէ ոսոխ ի դատաստանի, և դատապարտեսցէ զազգս զայս, զի եկն ի ծագաց երկրէ լսել զիմաստութիւն Սողոմոնի: Եւ երեմիա ասէ. թէ երթայք ի կղզիս Քեթիմ, և տեսէք, և ի կեղար առաքեսջիք, և ծանիջիք, և թէ փոխեսցեն հեթանոսք զաստուածսն իւրեանց, բայց ժողովուրդ իմ փոխեաց զփառսն իւր, ուստի ոչ ինչ աւգանցի:

Չանտաղատուկ աւրինսդրութիւնն յայտ առնէ, և այնչափ պահանջէ ի մարդկանէ, զոր և անասնոց զիւրօզոյն է ուղղել, և այնպիսի անասնոց, որ քան զամենայն անասունսն են անմտազոյնք. այլ թերեւս ասիցէ ոք, թէ նոքա զայն բնութեամբ ունին ճանաչել. ասեմ, թէ որ ինչ նոցա բնութեամբ մարթ է ուղղել, և սա առաւել մեզ անձնիշխանութեամբ:

Ծանեաւ եզնի զսացիչ իւր.

Ոչ առաւելութեամբ պարզեւոցն՝ որ առ նոսա, այլ յաճախութեամբ չարեացն նոցա աճեցուցանէ զամբաստանութիւնն. Չոր աւրինակ յամալթ առնելով զնոսա, զերկիրն և զերկիր կոչեաց ի վկայութիւն. նոյնպէս ո՛չ ընդ մարդկան, այլ ընդ անասունս համեմատէ, նաեւ ընդ անմիտ ե՛ւս անասունս, և յայտ առնէ թէ ե՛ւս վատթարագոյնք էին քան զնոսա. սոյնպէս և երեմիա՝ զտառքակ, և զծիծեռնակ ամէ ի մէջ. և Սողոմոն մերթ առ միջիւնն, և մերթ առ մեղուն առաքէ զվատն, որ ի վատութեան ծախիցէ զկեանս:

Իսրայիլ ասէ, զիս ո՛չ ծանեաւ.

Աճումն չարեաց, յորժամ ընտանիքն՝ որ այնպիսի պատուաւք պատուեալ էին, և ամենեքին միանգամայն ժպրհեցան ի չարիս. և ո՛չ ասաց թէ Յակոբ զիս ո՛չ ծանեաւ, այլ Իսրայիլ. զի առաքինութեամբ նախնոյն ցուցանիցէ յաճախագոյն զձննդոյն ապախտաւորութիւն, որ ոգւոյն առաքինութեամբ զարհնութիւն անուանն ընկալաւ. իսկ սոքա անցանկաւ զաւրինաւքն մատն եղեն անուան աւրհնութեան:

Եւ ժողովուրդ իմ ինչ զիս ի միս ո՛չ առ.

Ձիս՝ որ քան զարեգակն ևս յայտնագոյն էի:

Վա՛յ ազգի մեղաւորի.

Եւ այս սովորութիւն է մարդարէիցն որբալ զայնոսիկ՝ որ զանբժշկական ցաւսն ջերանիցին. սոյնպէս և երեմիա ասէր, վա՛յ, վա՛յ, վա՛յ, սոյնպէս և Քրիստոս ասէր. վա՛յ քեզ ասէ Քո՛րաղին, վա՛յ Բէթսաիգա. քանզի և այս վարդապետու. թեան նշանակ է, զի զոր ոչն յաւրինեն բանք, բազում անգամ յաւրինեն որբք:

Ժողովուրդ ի մեղաւք.

Այլ իմն յաւելուած ամբաստանութեան, որ զամենեսեան միանգամայն փակէ յաճախագոյն պատիժս:

Սերմ ժանց.

Ո՛չ եթէ զձնունդ նոցա աղարտէ, այլ յայտ առնէ, թէ յառաջին իսկ հասակէն զչարեաց բուռն հարին: Չոր աւրինակ յորժամ Յովհաննէս ասէ. թէ աւճք ձնունդք իժից, ո՛չ զբնութիւն պարսաւէ, ապա թէ ոչ՝ ո՛չ ասէր թէ արարէք պտուղ արժանի ապաշխարութեան, եթէ ի բնէ և ի ձննդենէ այնպիսի ոք էին. սոյնպէս և ասա՝ յորժամ ասէ թէ սերմ ժանտ, ոչ եթէ զձնունդն նոցա չար ինչ ցուցանէ:

Որդիք անաւրեւն.

Ո՛չ ասաց թէ որդիք անցեալք զաւրինաւք, այլ անաւրէնք, զի յայտ արասցէ, թէ և քան զայնոսիկ՝ որոց չէր ևս ընկալեալ զաւրէնսն, ո՛չ եկին ի լաւութիւն, և այսու զանձնիշխանութեան զամբաստանութիւն ցուցանէ:

Թողիք զՏէր և բարկացուցիք.

Յայտ յանդիման, և անուն Աստուծոյ յանդիմանութեան նոցա, որ առ երեմիայն մեղադիր լինի, թէ ի նմանէ մերժեցան, և ընդ դեւս բեւեռեցան, այլ ասէ

Եւ զուրբն Իսրայիլի.

Եւ այսու ե՛ւս զամբաստանութիւն աճեցուցանէ, զի հասարակաց ամենեցուն է տէր, և նոցա միայն ճանաչէր յայնմ ժամանակի:

Աւարագան և յեսս կացին, զի՞ ևս յաւելուցուք վերս առ վերս անաւրեւութեանց.

Մեծ պարսաւանք՝ յորժամ և ո՛չ պատժաւքն լինիցին պիտանիք, այլեւ տանջել իսկ զայնպիսիսն բարերարութեան նշանակ է. քանզի ո՛չ ինչ ունին ասել, թէ պատուեաց միայն, երախտաւոր եղև, և յորժամ յանցեանն եթող և ընդ վայր կհար,

այլ և պատուովն ձգէր առ ինքն, և ահա տանջանայն իմաստնագոյնս առնէր, սուկայն նոքա ո՛չ այնու և ոչ այսու աւկտեցան, այլ կացին մնացին յանբժշկական ակտին ծնկիցեալք. զամենայն աւրինակս բժշկութեան հեղոյց ի նոսա, մերթ հատանել, մերթ կտրել, մերթ խարել, սակայն և այնպէս ո՛չ հնազանդեցան, մանաւանդ անբժշկական հիւանդութեան նշանակ այն է, յորժամ ո՛չ կարիցէ զգարման բժշկութիւն ընդունել:

Ամենայն զլուխ ի ցաւս, եւ ամենայն սիրս ի սքսմութեան, յոսից մինչ ի զլուխ ո՛չ գո ի նմա առողջութիւն, ո՛չ վերք, եւ ո՛չ խոցուածք, եւ ո՛չ հարուածք այսուցեալք.

Ասէ զտանջանս և զպատիժս թէ ո՛չ սակաւ ինչ նշանակ է բարերարութեան և պատուոյն, զոր հեղոյց ի նոսա. ամենևին ասէ չարչարիցի և զամենայն տրտմութիւնս ած ի վերայ. զի եթէ ամենայն զլուխ՝ ի ցաւս, զիսրդ ոչ իցեն հարուածք, կամ վէրք, զի ուր վէրք իցեն զառողջութիւն այլոց ևս յայտ առնեն. իսկ եթէ ամենևին վէրք իցեն, ո՛ւր երևեսցին վէրք, այլ զայս ինչ կամի ցուցանել. եթէ ամենայն իսկ մարմինն վիրաւորեալ է, և ո՛չ եթէ կէսն ողջ է, և կէսն վիրաւորեալ, այլ ամենայն թարախեալ, ամենայն վիրաւորեալ. մի հարուածք ամենեցուն:

Ձի՛ք տեղի դեղս արկանել.

Այս քան զառաջինն եւս ծանրագոյն է, զի ո՛չ ակտանալն այնպէս դժնդակագոյն է, որպէս որ զբժշկութիւն ո՛չ կարիցէ ընդունել. և մանաւանդ, զի և բժիշկն եւս այնպիսի է:

Ո՛չ ձիրոյ եւ ո՛չ պատանաց.

Եւ զի՛ առնիցէ զբանն յայտնագոյն, կա մնա տակաւին յայլակերպիկ յորջորջմանն. քանզի այն իսկ է նորին լաւութեանն:

Երկիրն ձեր աւերակ.

Ձայս ո՛չ եթէ զեղելոց պատմէր, այլ զլինելոցն յառաջագոյն գտելակէր: Քանզի բազում անգամ զայսպիսի սովորութիւն ի զործ արկանեն աստուածեղէն մարգարէքն, միանգամայն և երկեցուցանեն ըզլսողսն, և զզաւրութիւն ճշմարտութեան յայտ յանդիման ցուցանեն. զի որպէս անցելոցն չէ՛ մարթ թէ չիցեն լիալ. նոյնպէս և որ հանդերձեալ ինչ ասիցին ի մարգա-

րէիցն չէ՛ հնար թէ ո՛չ լինիցին, բայց զի ապաշխարութեամբ մա՛րթ է անցուցանել զհանդերձեալ տանջանսն:

Քաղաքն ձեր հրձիգք.

Քանզի ո՛չ եթէ ապականեաց զնոսա ամենևին, այլ եթող զկիսայրեացն յալազգեացն, նշանակ մնացելոցն, որ առաւել կարող իցէ կսկծեցուցանել զմիտս տեսողացն:

Ձաւաւրն ձեր առաջի ձեր աւարտ կերիցեն.

Աւերեալ հիմն ի վեր յազգաց աւտարաց:

Աճումն նեղութեանցն, յորժամ տեսողք ե՛ւս լինիցին վշտացն եկելոց հասելոց, զոր ո՛չ յականջաւորս և եթ լսիցեն, այլ և ոչաւք տեսանիցեն:

Լինալ՝ բողբալ լիցի դուստր Սիոնի իբրեւ զնովանի յայգւոջ, եւ իբրեւ զսաղաւար մրգապահաց ի մէջ սեղիսնեաց.

Մեծ իմն ունին եւ առակք արինակաց, և մանաւանդ յորժամ ի գրոց ասիցեն հաստատութիւն ասացելոցն: Ձերուսողէմ կոչէ զուստր Սիոնի, վասն զի ըզլերամբն կայ քաղաքն, իբրեւ զհովանի յայգւոջ, եւ իբրեւ զաաղաւար մրգապահաց ի մէջ սեղիսնեաց: Ձի յորժամ պտուղն բառնայցէ, և մշակքն հեռանայցեն, արուգ մնան այնուհետեւ շինուածք քաղաքին:

Իբրեւ զբալաք պաւարեալ.

Այս տկարութեան եւ լքանելոյ նոցա արինակ է յորժամ չիցէ ոք՝ որ աւզնիցէ, ապա հա՛րկ է ի փակեալ պարիսպն ամրանալ:

Եւ քի ո՛չ Տեառն զաւրութեանց բողբալ եւ մեզ զաւակ, իբրեւ զՍողոմ արդեալ կործանեալ եւք, եւ զոմորա նմանեալ.

Քանզի սովորութիւն է միշտ մարգարէիցն ո՛չ միայն զայն ինչ՝ զոր ընդունելոց իցեն պատիժք յանցաւորքն ասել յառաջագոյն, այլ թէ եւ որպիսի ինչ իմիք պատժոց արժանի իցեն, զի եւ ի ժամանակս պատժոցն առնուցուն՝ ի միտ զբազմապատիկ Աստուծոյ երախտան, յորժամ ո՛չ ըստ արժանի յանցանացն, այլ ևս առաւել նուազագոյն կրիցեն պատիժս, նոյնպէս և աստ յայտ առնէ, թէ մեղք նոցա ո՛չ այնմ միայն պատժոց արժանի էին, այլ ամենևին համարէն ստտակման, եւ ամենայն ազգին միանգամայն ի միտսին

եղծանելոյ, որպէս ընդ Սողոմայեցիսն անց, զի առ հասարակ ամենեքին սատակեցան: Իսկ Աստուծոյ մարդասիրութիւնն ո՛չ եզայնմ լինել, այլ յոյժ նուազագոյն քան զմեզոն էամ զպատիժս պատուհասիցն: Եւ քանզի բազում հնոյն ընդ նորոյս է ազգականութիւն, յիրաւի գտոյն և Պաշտօն արկեալ ի գործ, ճառէ ազնուագոյն քան զմարգարէին, զոր աւրինակ յայնմ ժամանակի եթէ ո՛չ յաճախագութ Աստուծոյ ոգորմութեան էր ի թիկունս հասեալ՝ ամենեքին միանգամայն վարէին ի գերութիւն. նոյնպէս և ի ժամանակի Քրիստոսի գալտեանն, եթէ ո՛չ յայտնեալ էր չնորհացն՝ չարաչար մահուամբ քան զնոսա ամենեքեան ի միասին սատակէին:

Երբ ո՛չ Տեառն զաւրուրեանց բողբալ էր մեզ զաւակ.

Զգերծեալսն ի գերութենէն կոչէ զաւակ:

Լուարո՛ւք զպատգամս Տեառն իբխանի Սողոմայեցոյ, և ունկն դիւ լերուք արիւնաց Աստուծոյ ժողովուրդ Գոմարացոյ.

Քանզի Սողոմայեցոյ պատժոցն ասէին թէ են արժանի, յայտ առնէ, և եթէ ըզգործս սողոմայեցոյ յանդգնէին գործել. վասն որոյ և զնոյն իսկ անուն յորջորջանաց կոչէ նոցա. և եթէ ո՛չ այսպէս էր, և ո՛չ ժամանակն ինչ ձեռն տայր, և զի ո՛չ առ Սողոմայեցիսն ձգեաց զբանն, այլ առ հրէայնն, թէպէտ և նորին անուան առնէ հաղորդակիցս զնոսա, յայտ առնէ յաջորդաւքն՝ զոր ասէ. քանզի զոհս և զպատարագս և զայլ աւրինական պաշտամունս յիշէ, որոյ և ո՛չ հետք ուրեք երբեք երևեցան առ Սողոմայեցիսն: Եւ ունկն դիւք աւրինաց Աստուծոյ մերոյ, որ յանդիմանեն զձեզ:

Զի՞ կայ իմ և յաճախելոյ զոհից ձերոց ասէ Տէր, յագեալ եմ, զողջակեզս խոյոց, և զճարպս զառանց, և զարխն ցլոց, և զնխազաց ձերոց ես ո՛չ կամիմ.

Նաև սաղմոսն քառասներորդ իննեւորորդ հանդոյն սմին իմն յայտ առնէ, թէպէտև այլաւք բանիւք, սակայն սովին մտաւք. զի ի սաղմոսին ասէ կոչիցէ զերկինս ի վերուստ, և զերկիր դատել զժողովուրդ իւր, հանգոյն այսմ՝ որ աստ ասէ, թէ լուարո՛ւք երկինք, և ունկն դիւք երկիր, զի Տէր խաւսեցաւ, և այլքն եւս

կարգ ըստ կարգէ նմանակցէ: Զի որպէս Դաւիթն ասէ թէ ո՛չ վասն պատարագաց քոց կշտամբեցից զքեզ, և ողջակեզք քո առաջի իմ են հանապազ: Նոյնպէս և Նափ ասէ. թէ զի՞ կայ իմ և յաճախելոյ զոհից ձերոց ասէ Տէր: Դարձեալ Դաւիթ ասէ, թէ ո՛չ ընդունիմ ի տանէ քումմէ զուարակս, և ո՛չ ի հաւտից քոց նոխագս: Իսկ Նսայի՛ զողջակեզս խոյոց, և զճարպս զառանց, և զարխն ցլոց և զնոխազաց ձերոց ասէ ես ո՛չ կամիմ: Քանզի պատուհասեալ լինէին, յորժամ յայլոց առաքինութեանց ունայնացեալ գտանէին: Ապա իրբև ընդ մեծ իմն ողբքանաց զոհս և զաճախամատոյց պատարագսն ի մէջ բերեալ ստէպ կատարէին, յիրաւի երկոքեան մարգարէքն մանաւանդ, զի ամենայն իսկ մարգարէքն առնէին զնոսա անպտուղ յայնպիսի ողբքանաց և ի պատասխանաց, ուստի յայտ իսկ է, եթէ ո՛չ նախ զոհքն ինչ հաճէին և ո՛չ վասն այնորիկ պահանջեցան, այլ զի դաստիարակ լինիցի նոցա այլոց առաքինութեանց, քանզի զկարեութեան և զպիտոյիցն անփոյթ առնէին յայն հարեալք հատեալք. վասն այնորիկ զայն եւս ի բաց մերժէր Աստուած:

Եւ ոչ երբ գայցեմ ասէր երեւիլ ինձ ի սանարն իմ ո՞ խնդրեաց ասէ զայդ ի ձեռաց ձերոց.

Թէպէտ և ամենին իսկ զիրք զետացեոց վասն պատարագաց զնեն սուրէնս, և յերկրորդ աւրէնս, և յայլ ևս բազում զիրս վասն պատարագաց ճառեն: Իսկ արդ՝ աստ զիա՞րդ ասիցէ թէ ո՞ խնդրեաց զայդ՝ ի ձեռաց ձերոց, այլ զի ուսանիցիս. թէ ո՛չ նախ ընտիր ինչ կամք էին Աստուծոյ զայս այսպէս աւրէնսդրել, այլ ի նոցա տկարութենէն անտի եղև սկիզբն այսպիսի աւրէնսդրութեան. զի զոր աւրինակ ո՛չ կամէր եթէ հանցէ ոք զկլին՝ որ միանգամ զուգեալ է ընդ առն, այլ զի զմեծ չարիսն ի միջոյ բառնայցէ, զի մի՛ յորժամ ո՛չ ունիցին հրաման հանել զկանայս, առ հարկի ատելութեան անդէն ի տան խնդրեցեն, թոյլ ետ փոքր իրացն զի մի՛ մեծամեծ չարեք գործիցին. նոյնպէս և աստ, զի արգելուցու ի զոհելոյ զիւացն, յանձին կալաւ՝ զոր ինչ ո՛չ կամէր, զի այնու զոր ինչ ինքն կամիցի, զայն կատարեսցէ զուղղութիւն, զսոյն դարձեալ և Միքեէ մար-

գարէ յայտ արարեալ ճառէ, միթէ զոհս  
 և պատարագս մատուցէ՞ք դբաւասուն ամ  
 յանպատի անդ ասէ Տէր. և Երեմիա ասէ.  
 Թէ այս՝ զոր պատուիրեցի հարցն ձերոց,  
 Քանզի դեքն յայպիսի իմն կերպարանաւք  
 ողորդէին՝ ա՛ռ յանձն զսոյն և ինքն, զի մի՛  
 և մի՛ ինչ պատճառս կորստեան լինիցին  
 տկարացելոցն: Նաև զինգրել պատարա-  
 գացն, և խոստումն նոցին, նոքրիմք իսկ  
 մարգարէիւքն յաճախագոյն յայտ առնէ.  
 Իսկ դեքն՝ և ցատումն առնէին այնոցիկ  
 որ ո՛չ ստէպ մատուցանէին, և հանապազ  
 զճննճերն, և զձուխն մատուցանէին. իբ-  
 րև ի պատիւ իմն և ի հանգիստ առ ի վրի-  
 պեցուցանել զմոլորեալսն, այլ Աստուած  
 ո՛չ ի սկզբան խնդրեաց, և յորժամ հրա-  
 մայեացն յայտ արար թէ ո՛չ այն ինչ կամք  
 էին նորա, և ո՛չ միայն զի ո՛չ խնդրէր,  
 այլ և խափանել ևս կամէր, զի մի՛ մա-  
 տուցանիցեն, և ամենեւին միանգամայն  
 յայտ առնէ. Թէ կարի մեծութեան նորա  
 պաշտամանն անարիւն էին յայպիսի պէտք:

Կոխել դուք ասէ գզաւիքս իմ ամենեւին  
 մի՛ յանախիցեք.

Կամ գերութիւն յառաջագոյն նշանա-  
 կեալ գուշակեաց այսու, կամ ամենեւին  
 իսկ վճիռ տայ մերժելոյ: Դարձեալ՝ քանզի  
 ո՛չ ուղիղ մտաւք մտանէին անդ, վասն  
 այնորիկ արգելոյր:

Երբ: մասուցանիցեք նաեւ զ՛ւր է.

Քանզի ի հրամանացն՝ կէսքն իւրեանց,  
 կէսքն վասն այլոց իրաց հրամանալ էին  
 լինել. յայպիսի ինչ զԱստուած ճանաչել,  
 և չսպանանել, և չչնալ, և որ այլ ինչ  
 յայպիսի էին վասն աւկտին՝ որ ի նոցա-  
 նէն էր, զնէին աւրէնքն. իսկ զոհին, և  
 խունկս մատուցանել, և շարաթս պահել,  
 և որ այլ ևս յայպիսի ինչ էր, ոչ զի այն՝  
 այնպէս ինչ վայրապար լինիցի, այլ զի  
 այնպիսի իրաց զբաւստնաւք ի զիւաց պաշ-  
 տամանէն հեռացուցանիցէ. քանզի և նո-  
 քա զայս ամենայն կատարէին, և պտուղ  
 ինչ ի սոցանէ ոչ շահէին, այլ տակաւին  
 բեռեռեալք զիւացն՝ ստիպեալ երթաին.  
 ապա յիրաւի զայս ամենայն խոտէր. քան  
 զի և ծառ յիրաւի կտրի, որ ոստս և տե-  
 բեւ բերիցէ, և պտուղ ո՛չ տացէ, և հո-  
 ղագործին փոյթ վասն տնկոցն յայն սակս  
 է, ոչ զի զկեղան և զշառաւիղսն արծա-  
 կիցէ, այլ զի ի պտղոյ անտի վայելիցէ:

Խունկիդ ասէ պիղծ համարեալ են ինձ .

Տեսանե՞ս, զի ո՛չ ընդ բնութեան ի-  
 րացն՝ որ մատուցանէին, ուրախ լինէր,  
 այլ զմիտս մատուցանելացն հայցէր, վասն  
 այնորիկ զձուխն, և զճննճեր զննելացն  
 նոյի հոտ անուշից կոչէր, և զխունկս որ-  
 դուցն Իսրայէլի՛ պղծութիւնս, որպէս և  
 ասացի իսկ. Թէ ո՛չ զոհս պատարագացն,  
 այլ զսէր մատուցանելեացն խնդրէ:

Զգլուխ ամսոց ձերոց և զգաբարս դա-  
 սարկուքեան .

Զի ո՛չ ինչ ի կարեւորացն խոտէ, այլ  
 զաւելորդսն, զոր և Քրիստոս ի գալստեան  
 իւրում խոփանեաց. վասն որոյ և Պաւ-  
 ղոսի ուժնագոյն իմն ի գործ արկեալ զբանն՝  
 յորժամ կուտէրն ընդ հրէայսն, զի ո՛չ զայս  
 միայն, այլ և զայս ևս բաղում ինչ քան  
 զայս ի միջի եղեալ զի եթէ ո՛չ զիւրեանց  
 ինչ զառաքինութիւնն ցուցանիցեն, ոչինչ  
 աւկտեսցեն յայսպիսեացս. եթէ դու տսէ  
 հրէայ անուանեալ ևս յարէնսն, և պար-  
 ծիս յԱստուած, և զիտես զկամս նորա,  
 և ընտրես զլաւն, և հմուտ ևս աւրինացն.  
 և դարձեալ ասէ, թլփատութիւն աւզնէ,  
 Թէ զաւրէնսն պահեսցես, ապա եթէ յան-  
 ցաւոր աւրինացն իցես, թլփատութիւն քո  
 յանթլփատութիւն համարեալ լիցի, զի թէ-  
 պէտե հաւատացան նոցա աւրէնքն, սա-  
 կայն և ոչ անտի ինչ շահեցան, քանզի ո՛չ  
 հաւատացին, զոր և Դաւիթ ակնարկելով  
 իմն յայտ առնէ: Ասէ, մեղաւորին ասէ  
 Աստուած, Թէ դու ընդէ՞ր բնաւ պատմես  
 զարդարութիւն իմ. քանզի ի վեր և ի խո-  
 նարհ տարածեալ զունկնդրութիւն աւրի-  
 նացն՝ միայն մեծ իմն համարէին, և ի գոր-  
 ծոց ունայնացեալք և թափուրք էին. յայս  
 հայեցեալ Պաւղոսի հանէր զնոսա ի պար-  
 ծանացն, ասելովն թէ՛ որ ուսուցանես զըն-  
 կերն, զանձն քո ո՛չ ուսուցանես, և որ  
 քարոզես մի՛ գողանալ, գողանաս: Եւ Դա-  
 ւիթ նման սմին ասէ, եթէ տեսանէիր  
 զգողս, ընթանաիր ընդ նոսա, և ընդ շուսն  
 զնէիր զբաժին քո:

Եւ զաւրն մեծ, ասէ, ոչ առնում յանձն .

Զպենտեկոստէից և զՏաղաւարահա-  
 րացն, և զԶատիկն և զայլոցն ևս տաւնից:

